

«ԿԵԱՆՔ ՈՒ ԵՐԱՋ»

Մ. ԻՇԽԱՆ (Պէյրուս 1949)

Ամէն տաղանդաւոր բանաստեղծի մէջ մաս մը կայ որ իր շրջանին տիրոջն է։ Դիտուած է սակայն որ այդ մասը յաճախ ամենէն գնահատուածն է գործին մէջ, մինչդեռ ապրելու սահմանուած մասը անտարբեր կը թողու յաճախ շրջանը։ Մ. Իշխան սփիւռքի մեր նուաճումներու հասած բանաստեղծն է, հակառակ այս իրողութեան զերծ է յաճախ վերի տարազին անխուսափելի պարտադրանքէն։

Կարելի է կասկածիլ անտարակոյս գրական ճաշակի մը ընդունուած վաւերականութեանը վրայ, զրականութեանց պատմութեան մէջ ամէն շրջանի կը փոխուի անիկա, ու գեղեցկագիտութեան ամենէն խոցելի հիմքերը կը գտնենք այդ փոփոխութեանց խորը։ Սակայն կարելի է հաւատալ գրական ախորժակին, որ յաւակնոտ է անշուշտ որքան նախորդը, բայց որ շատ բան կը յատկանշէ զրազէտի արժանիքներէն։

Այս վերջին ըմբռնումով, Մ. Իշխան սփիւռքի սիրուած բանաստեղծն է, մին անոնցմէ՝ որ իր երազը ունեցաւ, և տառապեցաւ այդ երազին համար, մին անոնցմէ՝ որ միշտ կեանքին նայեցաւ երազուն աչքերով, և երբ չգտաւ այդ իմաստը կեանքին մէջ, երազին դարձաւ, այսինքն մնաց միշտ բանաստեղծ։

Այս է պատճառ անտարակոյս, որ հանրային լարէն աւելի զօրաւոր է իր մէջ անձնականը, պարագան՝ բոլոր իրաւ բանաստեղծներու։

Մ. Իշխան երգած է ու կ'երգէ իր երազները, սէրերը, կարօտները, յուսարեկումներն ու տրտմութիւնները։ Միւս կողմէն ուրախ ենք հոս յայտարարել կարենալու, թէ անձնական ապրումի պայման իր մէջ կը լրանայ և կ'օժանդակուի, նաև ձևի պայմանով, որ ուրիշ բան է բայց խորքին բարեգէտ արտայայտութիւնը, որ սփիւռքի յաջողագոյն նկատուած բանաստեղծներէն շատ քիչերուն մենաշնորհն է տակաւին։

Մ. Իշխանին երբեք է պակասած խառ-

նուածք ու տաքութիւն, սակայն ամենէն ուշագրաւ պարագան իր մէջ այն ներքին հաւատարմութիւնն է, որ իր բոլոր գործերուն կուտայ ոչ միայն անձնայնութեան կնիք, այլ նաև համամանութիւն (homogène) որ կը համախմբէ իր անձնականութեան ցրիւ մասերը, դէպի գուրս և դէպի ներս կարկառուած, վերածելու զանոնք ժամանակին մէջ ամբողջի մը, համադրութեան մը։

Մ. Իշխան ամբողջապէս կարօտ է ու ձգտում, կորսուած գեղեցկութիւններու ի խնդիր։ Նման թրուպատորի մը, ուսած մախաղը իր երազներուն, կարօտներուն և սէրերուն, ան իր քերթուածներով կը շրջի դղեակէ դղեակ, հանգրուանէ հանգրուան, անոնց մարմար շուքերուն տակ երգելու աննահանջ կարօտը իր երէկուան, և աւաղանքը ներկային։

Ու եթէ իրեն հարցուի թէ ինչո՞ւ այսքան տխուր կ'իյնան իր տողերը թուղթին, անտարակոյս որ պիտի պատասխանէ — զի ապրեցայ ես իմ ներկան — ու եթէ կըրկնուի հարցումը թէ երբեք երգերուդ մէջ՝ կը բանայ թե սիրտ մը մանկան, Մ. Իշխանի պատասխանը պիտի ըլլայ, «վաղուան անոյշ խոստումն է ան»։

Այդ դիւրին չիրականացող բայց քաղցր խոստումներու յոյսով ու երազներով թեւաւոր, Մ. Իշխան մեր զրականութեան տուաւ ու կը շարունակէ տալ գործեր, որոնք այլապէս անոյշ խոստումներ են. մեր այլուրացած և մութ հոգիներուն։

Մ. Իշխան նուաճումներու հասած իրաւ բանաստեղծ մըն է իր կեանք ու նրազ վերջին այս հատորին մէջ։ Կեանքէն իր քիչ մը հեռու մնալը, չի տկարացներ իր գործը, վասնզի իր հոգին անշամանդաղ գեղեցկութեամբ կ'իյնայ իրերուն վրայ։

Ե.

